



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 12 ՌԵԿՏԵՄԲԵՐ, 2016

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐՈՐԹ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վերաբիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ԲԱՆ ՂԳ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Աստուած յաիպենական, բարերար եւ ամենակալ,
սպեղծող լոյսին եւ յօրինող գիշերին.
մահուան մէջ կեանք եւ խաւարին մէջ լոյս եւ Դուն.
ակնկալողներուն յոյսը եւ շուարածներուն երկայնամտութիւնը.
Քու ամենահնար իմաստութեամբդ առաւօտի կը փոխես մահուան ստուերները,
ո՛վ աննուաղ ծագումի եւ անմուտ արեգակ.
որովհետեւ գիշերին խաւարը չի կրնար ծածկել Քու փերութեանդ փառքը:
Դուն կը լսես կապուածներու հեծութիւնը եւ կը նայիս խոնարհներուն աղօթքին,
եւ կ'ընդունիս անոնց խնդրուածքը,
Աստուածս եւ Թագաւորս, կեանքս եւ ապաւէնս,
յոյսս եւ վարահութիւնս, Յիսուս Քրիստոս, ամենուն Աստուածը.
ո՛վ սուրբերուն հոգիին մէջ հանգչող Սուրբ,
վիշտերու միսիթարութիւն եւ մեղաւորներուն քաւարան,
որ գիտես ամէն բան՝ անոնց ըլլալէն ալ առաջ:
Թող Քու աջդ մեր վրայ մնայ, որովհետեւ Դուն գթած եւ ողորմած ես,
ու Քու անունովդ կոչուած են Քու բոլոր ծառաներդ:
Փառք եւ իշխանութիւն Քեզի, Հօրը եւ Սուրբ Հոգիին հետ,
յաիպեանս յաիպենից: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՐՈՐԹ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

**Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի Կուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:**

ՕՐՈՒԿԱՆ ՆԻԻԹԸ



ԵՐԳ ԵՐԳՈՅ ԳԻՐՔԸ

ՄԱՏԹԷՈՍ ԵՒ ՂՈՒԿԱՍ ԱԲԵՏԱՐԱՆԻՉՆԵՐՈՒ ՀԵՏ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

«Շուր ըրէ, ով իմ սիրականս ու խնկաբեր լեռներուն վրայ այծեամի կամ եղնիկներու ձագի նման եկուր» (Երգ Երգոց 8:14):

Ահաասիկ շուրով պիտի իրականանայ այս մարգարէութիւնը, եւ նոյնը պիտի մարգարէանար Եսայի մարգարէն ըսելով. «**Ահա կոյսը պիտի յղանայ ու որդի պիտի ծնանի եւ անոր անունը Էմմանուէլ պիտի կոչուի**» (Ես 7:14):

Ահա այդ սիրականը պիտի գայ, նախքան Անոր գալը, նշաններ փրուեցան Մարիամին, հովիւներուն, մոզերուն, եւ անոնց ճամբով միաներուն:

Առաջին նշան՝ Մարիամին, հրեշտակին աւերումը, որ պիտի յղանաս Սուրբ Հոգիէն եւ որդի մը ծնիս Անոր անունը դնես Յիսուս, որ կը նշանակէ «**Տէրը կը փրկէ**» կամ «**Տէրը պիտի փրկէ**», «**անիկա իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ**» (Մտք 1:21): Տակաւին, Անոր անունը «**Էմմանուէլ**» պիտի դնես, որ կը նշանակէ՝ «**Աստուած մեզի հետ**»:

Երկրորդ նշան՝ հովիւներուն, որոնք գիշերով իրենց հօտերուն պահպանութիւն կ'ընէին: Տիրոջ հրեշտակը երեւցաւ անոնց եւ ըսաւ. «**Մի՛ վախնաք, ձեզի աւերիս մը պիտի փամ, որ ամբողջ աշխարհին մեծ ուրախութիւն պիտի պատճառէ: Այսօր, ձեր փրկիչը ծնաւ, որ Օծեալ Տէրն է: Եւ սկսան զԱստուած փառաբանել եւ երգել, ըսելով. "Բարձունքներուն մէջ Աստուծոյ փառք, խաղաղութիւն երկրի վրայ, եւ մարդոց միջեւ հաճութիւն"**» (Ղուկ 2:9-14):

Երրորդ նշան՝ մոզերուն, Արեւելքէն մոզեր եկան Երուսաղէմ եւ հարցուցին. «**Ո՛ր է Հրեաներու նորածին թագաւորը. մենք անոր աստղը տեսանք արեւելքի մէջ եւ եկանք երկրպագելու իրեն**» (Մտք 2:2):

Ահա այդ սիրականը Տէր է որ պիտի գայ փրկելու, իր ժողովուրդը իրենց մեղքերէն սրբելու: Այդ սիրականը խաղաղութեան իշխանն է, որ պիտի գայ երկրի վրայ խաղաղութիւն եւ մարդոց միջեւ հաճութիւն բերելու: Սիրականը այն թագաւորն է, որ Արեւելքէն մոզեր եկան Անոր երկրպագելու: Բայց նոյն սիրականը, որ երբ ժամանակը հասաւ ծնելու իրեն համար պանդոկին մէջ տեղ չկար, որովհետեւ պանդոկները զբաղ էին:

Ուրեմն, բաւարար չէ, միայն ըսել, երկուր շուր ըրէ, ով իմ Սիրականս, այծեամի եւ կամ եղնիկներու ձագի պէս եկուր, այլ որքանով պատրաստ ենք լսելու եւ ընդունելու հրեշտակին աւերիսը, որ այսօր քեզմէ պիտի ծնէ, այդ սիրականը: Որքանով պատրաստ ենք հովիւներու նման, լսելու հրեշտակներուն աւերիսը եւ երթալու տեսնելու թէ ինչ է պատահածը: Որքանով պատրաստ ենք մոզերուն նման ոչ միայն տեսնելու Անոր աստղը, այլ հետեւելու այդ աստղին երթալու եւ գտնելու Անոր տեղը, եւ ըսելու. «**մենք եկած ենք զինք տեսնելու եւ Անոր երկրպագութիւն ընելու**»: Եւ թէ որքանով մեր պանդոկները լեցուն եւ զբաղ են առօրեայ հոգսերով, որ ըսենք, շատ ներող կ'ըլլաս, տեղ չունինք:

Յամենայն դէպս, Սիրականը պիտի գայ, բայց մենք պատրաստ ըլլանք Անոր գալուստին, ըլլանք, հովիւներ, ըլլանք մոզեր, եւ կամ հերովդէսներ, որոնք հազիւ լսեցին, թէ թագաւոր մը ծներ է վրդովեցան:

Ոեւէ մէկ ժամանակ Սիրականը պիտի գայ, ուստի պատրաստ ըլլանք: